


Հ Ա Ս Յ Է  
Rédaction du Journal arménien  
ARCHALOUYCE  
(EGYPTE) LE CAIRE



ՊԵՏՄԵՆԵ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկան գր. ողջ 30

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Տարեկան փրակ 10

Փաստագրի 30 ԵՆԵՆՈՒՄ ԵՆԵՆՈՒՄ յոթանասուներեք զեքսանգր ցրեմ պիտի ըլլան .

Քուս - Ներ - Կարգադրութեան  
ԵՂԻՔԷ ՓՈՐՈՍԵԱՆ

Չի հրատարակուած ձեռագիրները  
ևս չեն տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ  
ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
շուր համաձայնութեամբ :

Ազնվամեղրիոյ Կեղեկայացուցիչ  
Յ. Պ. ՏՈՒՐՈՒՆԵԱՆ  
Ռադիպ Բաշա Թ. 67

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն . Գ Ր Ա Կ Ա Ն . Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Թի՛ւ ԱՐՇԱՆՈՍՈՒ և Թի՛ւ ՏՊԱՐԱՆԻՆ  
Վերաբերեալ նիւթական խնդրոց համար  
պիտի է զիսկ ներքազարդեալ հարցոյ  
քերթիս մասակարարին, որ Կ՛

ԳԻՈՐԿ ՓՈՒԹԱՋԵԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-  
տու են իրենց գրածներուն :

ZUSZ 40 ՓԱՄԱ ՈՂՁ

ՄԻՋԱՆԿԵԱԼ ՆՕՐԵՐ

(Այլարանական ստույիս)

Նախորդ երկու թիւերով հը-  
րատարակուեցաւ ամենայն Հայոց  
Հայրապետ Վեհափառ Խորհրդան  
Հայրիկի օրհնածիր կոնդակը՝ և «Մեր  
Կառավարութեան» Ներքին Գործոց  
Նախարար Վեհ. Մուսթաֆա Բաշա  
Ֆէհմիի նամակը :

Երկուքն ալ զերպանցապէս  
թելադրական և բացատրութեանց  
անկարօտ :

Վեհ. Պօղոս Բաշա Նուպար,  
վերոյիշեալ երկու չքնաղ և իմաս-  
տակց գրութիւններով օժտելու  
համար «Հայկական Բարեգ. Ընդհ.  
Միութիւնը», անփոխելիօրէն կա-  
պացուցանէ թէ՛ Մեծանուն Երկ-  
րաշափ և հաջուստիւ Մեքենա-  
գէտ մը ըլլալէ աւելի՝ իր հօրը -  
Մեծն Նուպարի - աշխարհահռչակ  
Գիւտնադիտութիւնն ալ կը ցօլացնէ  
իր անձին վրայ :

Մեր պաշտօնագրով քննադատ-  
ները սակայն՝ որոնց կարծիքը ընդ-  
հանրապէս մեզմէ արեւելեան թով,  
կամ մէկ մէկ գաւաթի առջև մեծ  
ընդունելութիւն կը վայելեն, պէտք  
տեսած են որ՝ Վեհ. Պօղոս Բաշա հե-  
տեւեալ իմաստով գրէր իր նամակը  
Վեհափառ Հայրապետ Խորհրդանին,  
ինչպէս նաև Ներքին գործոց Նախա-  
րարին :

Ասանցմէ առաջինին համար թե  
լադրուած օրինակը սըւոր մօտ բան  
մ' է :

«Աստուածարեալ Հայրապետ և ին-  
«Խորհրդան Սրբազան՝  
«Մենք հոս Գահիրէի մէջ ըն-  
կերութիւն մը հիմնած ենք, որուն  
անունը «Հայկական Բարեգ. Ընդհ.  
Միութիւն է . . .»

«Ձեր Վեհափառութիւնը թող  
բարեհաճի ի տես նամակիս՝ սկիզբ  
մեզի զրկելու բարձր այն Հայաս-  
տանցի կործանանքները, որոնք  
էջմիածնի անխորտակելի պարիսպին  
տակ իրենց չ'գործած մեղքին տա-  
ժանքը կրելու դժբաղդութեան  
մատուցած են ու պանդխտութեան  
դառն դաւաթին մինչև մրուրը կը  
պարպեն, և թերևս՝ սովամահ ալ  
պիտի ըլլան : Մեզքը չէ՞, Վեհա-  
փառ Տէ՛ր, այդ անյալթելի քա-  
ղերը եզրագոտ զրկեցէ՛ք, որպէսզի  
անոնց ֆիզիքական ուժերէն օգտու-  
ինք և քանի մը օրէն ազատութեան  
գունագեղ գրօջը պարզենք Հայաս-  
տանի անառիկ սարերուն վրայ :»

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւ այսպէս մտածողները կը թե-  
լադրեն միանգամայն որ՝ Ներքին  
գործոց Նախարար Վեհ. Մուսթա-  
ֆա Բաշա Ֆէհմիին ալ սա՛ ոճով  
նամակ մը գրէր Պօղոս Բաշա, որ-  
պէսզի այն ատեն սիրելի և պաշտե-  
լի ըլլար :

«Առ նորին Վեհ. մութիւն  
«Ներքին գործոց Նախարար և ին  
ի՛րաշաքիս

Վեհ. Տէ՛ր .  
«Բանի մը օրէն Հայաստանի  
վրայ ազատութեան որդազնադոյն  
գրօջը պարզելու համար, ծրագրած  
ենք կազմել Ընկերութիւն մը, ու-  
րուն անունը պիտի ըլլայ «Հայկա-  
կան Բարեգ. Ընդհ. Միութիւն» :

«Կը խնդրենք Ձեր Վեհ. մութե-  
նէն որ հաճիք հրամայել պատե-  
րազմական Նախարարին, որպէսզի  
ազնուաբար մեզի տրամադրէ 20000  
ի չափ հրացան, կործն հայաստան-  
ցիներուն համար, որոնք մօտ օրէն  
էջմիածնէն հոս պիտի հասնին Վե-  
հափառ Հայրապետին յանձնարարա-  
կանո՛րը : Դարձեալ 120, 000 ի չափ  
մ' ալ փամփուշտ :

Ասանցմէ վառ 50,000 քիլօի չափ  
պայթուցիկ նիւթեր : 14 թնդանօթ  
որոյմէ մէկուն հրամանատարութիւ-  
նը պիտի վարէ Թօլուալ Շէյրանը :  
40,000 քիլօ դարպօնաթ տը . . . և  
քիլ մ' ալ կլիսերին : Ասոնց վրայ  
10,000 հօխայ ալ գիտե՛ս . . .»

«Թէպէտև մեր հայերը շատ  
վարժ են հրացանը կոթէն բռնելու,  
սակայն լաւ պիտի ըլլայ եթէ ա-  
տոնք ճակեցնելու համար 20 ի չափ  
ալ Գերմանիա կամ Անգլիա կըթը-  
ւած շնորքով հազարապետներ տրա-  
մադրէք մեզի, որ մեր հայաս-  
տանցիները վարժեցնեն : Որովհետև  
ինչպէս գիտէք, անոնք մինչև հոս  
գալեերին՝ ճամբան չափազանց յու-  
նած և մոռցած պէտք է ըլլան զի-  
նախորդ օրերը . . . Իրաւ է որ ա-  
նոնցմէ ոմանք գողտուկ անկիւնէ  
մը մէկ հոգիի վրայ ենք և նոյն  
իսկ չորս գնտակ պարպելով կսպան-  
նեն զայն, սակայն տխուր պիտի  
ըլլամ խոստովանելու որ, հինգ հո-  
գի մեկտեղ տեսածնուն պէս ապո-  
րք կոտնեն . . . աս փոքրիկ պակա-  
սութիւնը ունին միայն, որուն ճա-  
րը չի կրցանք գտնել մինչև հի-  
մայ . . .»

«Ալ ի՛նչ ըսեմ, Տէ՛ր Նախա-  
րար, անչուտ հասկցաք թէ՛ ժողո-  
վուրդիս հոգին զովացնելու համար  
է որ այդչափ հազար փամփուշտե-

րու խօսքը ըրի ի վերև, որոնք չը  
մտնամ բոկու թէ՛ լուրսն ալ պօջ  
ըլլալու են . . . մեզի զրկուելու ա-  
տեն ձեռք անուած կանխահոգ  
զգուշութիւններու շնորհիւ . . .»

Ընդունեցէք և այլն .  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ Բաշան այսպէս գրեր,  
հաւատացէ՛ք որ վաղը նոյն իսկ մե-  
ծազորք ցոյց մը պիտի սարքուէր  
եզրագոտի ամբողջ լայն պողոտանե-  
րը սարկող զորանայի և հո՞ ըսալ-  
մութեան մը ընկերակցութեամբ  
չըլան մը կատարելու պայմանաւ,  
իսկ Պօղոս Բաշա Նուպարը - թէպէ-  
տև հիմայ հոս չէ՛ բայց հոգ չէ -  
Հայկական Բարեգ. Ընդհ. Միու-  
թեան Ատենապետը եղած ըլլալուն  
համար եթէբորդ երկինքը պիտի  
բարձրանար, անճալարընէն հիւս-  
ուած մարդակազմ կամուրջի մը շը-  
նորհիւ . . .»

Բայց եկու տես որ Պօղոս Բա-  
շա պարտքի, սխտամիթի, հրացանի  
գնտակի, ուժանակի, պայթուցիկի,  
խօսքը ըրած չէ. հայա՛ համեստ-  
րէն ըսած է որ քանի մը հազար  
ձիւաւոր Ս. Գեորգիներ ճամբայ պիտի  
հանէ, որպէսզի Հայաստան երթան  
և կարելի եղածին չափ ժողովուրդը  
միթիւրեն ու պաշտպանեն . . .»

Այսպէս ազգասիրութիւն կը լ-  
լա՛յ . . .»

Ա՛յն միամիտները, դուք որ  
Հայաստանին ինչ ըլլալը և ուր  
գտնուելը անգամ չէք գիտեր . . .  
Պիտի յանձնարարէի, ո՛վ իմ  
ամենահմուտ ընթերցողներս . ուչի  
ուշով կարգացէք «Արշալոյս» ի նա-  
խորդ թուոյն կամ Բարեգործական  
Ընդհանուր Միութեան տեղեկա-  
գրքոյն մէջ թէ՛ ի՛նչ ըսած է Պօ-  
ղոս Բաշա և ի՛նչ գրած է իր կոն-  
դակին մէջ Վեհափառ Հայրապետը,  
որուն ճշմարիտ ազգասիրութիւնը  
ամեն տարակայսէ վեր եղած է, և  
բաւ մը անգամ աւելցնել ոճերի  
պիտի հաւասարէր . իսկ ըսել ձեզի  
թէ «կարգացածնիդ հասկցէք կամ  
հասկնայրու ջանացէ՛ք» ամենօրեայ  
պարտականութիւն է արդէն, որով-  
հետև ասիկայ ձեր անխմտ և դի-  
տուամաւոր քննադատութեանց չափ  
մը կրնայ գնել :

Ե. ՔՈՐՈՍԵԱՆ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ  
բաժանորդներէն կը խնդրուի որ հա-  
ճին փութացնել իրենց բաժնեկրիներ-  
ըն՝ նկատելով որ տարւոյն իններորդ  
ամիսը կը թեւակոխենք :

Այսպէսով մեր յարգելի բաժա-  
նորդները մեզի խնայած կը լլան մաս-  
նաւոր դիմումներու առթիւ ըլլալիք  
ծախքերէն և ժամավաճառութիւն-  
ներէ :

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԿԻՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Մինչև հիմա խօսեցանք կնոջ դե-  
րին և իր իւրրումներուն վրայ ընդ-  
հանուր տեսակետով . արդ գտնանք  
մերիններուն և կրօնք - մեր հասա-  
րակութեան և մեր միջավայրին հա-  
մար, այսինքն Արեւելքի համար քա-  
նի որ հոն կը գտնուի Ազգին հո՞ զան-  
գուածը, կնոջական հարցը բնիւթ  
է իմանալ թէ՛ հայ կինը իր գերին մէջ  
զրկանքներու մատուցած է, եթէ այո՛,  
միջոցներ ձեռք աննել ատոր առաջը  
առնելու, տեսնել թէ ինչ պէտք է ընել  
իր կնոջական մակարակը բարձրաց-  
նելու համար՝ ընելու համար զինքը օգ-  
տակար նախ իր տանը, իր ընտանի-  
քին, և յետոյ իր հասարակութեանը :  
Ընտանիքին կազմութեան հիմը ամուս-  
նութիւնն է, եւ որով նախ պէտք է  
աչքի առաջ ունենալ ամուսնական կա-  
պը, պայմանները և ապահարգանք,  
և յետոյ գիտել թէ ինչ կանխակալ  
կարծիքներ կը տիրեն իր մասին մեր  
մէջ, մէկ խօսքով՝ առանց մէկ օրէն  
միւսը վեր ի վայր չըլելու ընկերական  
կարգ ու սարգը՝ միջոցներ ձեռք առնել  
լաւագոյն արդիւնքը ձեռք բերելու հա-  
մար կ'ինէն, և ասի թէ՛ իրեն և թէ՛  
իր ցեղին համայնքին օգտին համար :

Մեր մէջ ֆէմինիզմ քարոզողները  
կը սնանին Եւրոպայի շատ անգամ  
ծայրայեղ ընկերաբաններու վարդապե-  
տութիւններովը, և կուզենք որ նոյն  
վարդապետութիւնները իրենց նոյն ձե-  
ւովը ու տարազովը քաղաքացիական  
իրաւունք ստանան Արեւելքի մէջ ալ :  
Բայց ամէն բանէ առաջ նախ պէտք է  
սերտենք այդ վարդապետութիւնները  
իրենք իրենց մէջ տեսնելու համար թէ  
ինքնին ի՛նչ կարծին, յետոյ տեսնելու  
ենք թէ ի՛նչ բաներ առեն տուած են  
ստանց, այդ գրութիւններուն մէջ մեծ-  
կակ մասը արմատ գտած չէ նոյնիսկ  
ամենէն զարգացեալ նկատուող ժողո-  
վուրդներուն մէջ անգամ, այդ քարո-  
զութիւնները իրենց անպատճոյճ ձե-  
ւին մէջ աչքի առաջ ունենալէ յետոյ  
պէտք է ի նկատի առնենք նաեւ մեր  
միջավայրը և մեր ուրոյն պէտքերը  
և ազգային աւանդութիւնը : Ուրիշ  
կէտ մ' ալ կայ զոր պէտք է ուշադրու-  
թենէ վրիպեցնել - ինչ որ Արեւմուտ-  
քի այս ու այն ժողովուրդին համար  
յարմար է, ասի չի նշանակեր թէ ան-  
վերապահ կերպով անպատճառ նոյն օգ-  
տակարութիւնը պիտի ունենայ և մեր  
մէջ :

Ըստ իս աւելի գործնական օգտա-  
կարութիւն մը առաջ կուգայ եթէ բա-  
րելաւոր Հայաստանցի հայ կնոջ վե-  
ճակը : Թէպէտև առիթը ունեցած չեմ  
երկրին ներքերը ճամբորդելու, բայց  
լրագրաց մէջ երեւոյզ պարբերական

թղթակցութիւնները եւ բերանացի ըստացած անդհուր թիւերը շատ արգասանելի գոյնով մը կը ներկայացնեն հայ կնոջ վիճակը : Չուրկ մտային զարդացումէ, զուրկ Օրէնքին պաշտպանութենէն, ինք իր բախտին ճրգուած, որուն նոյնիսկ զլացումն է իր պարզայ ամուսնոյն ընտրութեանը մէջ ձայն ունենալը : մէկ խօսքով տեսակ մը գրաստ . տխուր չէ՞ միթէ այս վիճակը :

Ահա ընդարձակ ասպարէզ ֆէմինիստներուն համար գործելու . եւ փոխանակ հրապարակ նետելու վարդապետութիւններ որք շատ անգամներ խնդրական են, աւելի չօջափելի եւ աւելի իրական օգուտ մը առաջ բերած կըլլան մեր պէտքերը քննելով եւ նախնի գարմանին վրայ մասնակցելով . երբ մէկուն խելքին փչելով հայաստանցի այդ վիճակը ներկայացնող կնոջ մը ըրեցարկութեան հարց մը ներկայացնելու ըլլայ, ինչ արդիւնք կրնայ տալ . թողունք որ, օրինակի համար, ըրեցարկութեան իրաւունքի հարցը ինքնին շատ սաղմնային եւ երկրապահան ալ փուլի մը մէջ է նոյն իսկ Արեւմտեքի մէջ :

Իր վերջին տարիներուն մէջ մեր հոգեւոր հայրապետը, Սրբմեծան Հայրիկ կանանց ըրեցարկելու իրաւունք տրուաւ : Ասի իրականութեան մէջ գործադրութեան նոյն իսկ սկզբնաւորութիւն մը պիտի՞ կրնայ ունենալ թէ ոչ, առանց փնտռելու ասի եւ իմ ամբողջ յարգանքովս հանդերձ մեր ազգային եկեղեցւոյ հանգուցիւ Պետին հանդէպ, չեմ կրցած սակայն ըմբռնել թէ ատի ինչ պէտքեր կը համապատասխանէ, արգեօք մեռելու տառ մնալու սահմանուած է եւ պարզապէս ըստեղծուած է ցոյց տու համար թէ մենք ոչ միայն Արեւմտեքէ եւ չ'ենք մնար այլ եւ կը զինք կանցնինք իսկ զինքը :

Մեր մէջ ֆէմինիստները - եթէ երբէք կնոջական ազատագրութեան հարցով լրջօրէն զբաղող կայ կէտ մը կայ զոր պէտք չէ ուշադրութենէ վրիպեցնեն : Նախ կայ կնոջական հարց մը որ ամենուրեք, հողազոյրս ամէն կողմը նոյնն է . եւ երկրորդ կայ ամեն երկրորդ ուրոյն անջատ կնոջական հարց մը . որը մէկ երկրէն միւսը, մէկ ժողովուրդէն միւսը, բարձր, սովորութեանց ազգային աւանդութեանց եւ զարգացման հետեւանօք առաւել կամ նուազ կը տարբերի :

Տարբեր բացատրութեամբ՝ խնդիրներ կան որք կնոջ կը պատկանին, կինը կը շահագրգռեն պարզապէս կին եղած ըլլալուն համար : Կան ուրիշ խնդիրներ ալ որք մինչդեռ վերջին աստիճան կը շահագրգռեն, օրինակի համար, անդլիսցի կինը, մինչ անդին բողոքովին անտարբեր կը թողուն գերմանուհին :

Լաւագոյն կըլլայ որ մեր մէջ ալ ֆէմինիստները այս կէտը ինկատի առնեն, եւ այդ պարագային զիւրիկ կըլլայ հասկացողութեան մը յանդիւր : Եւ ճիշտ այս պատճառաւ երբեմն մեզ կը հրամանեն այս ինչ կամ այն ինչ կանանց վայելած կարգ մը ազատութիւնները, կարգ մը իրաւունքները, եւ կուզեն տեսնել նոյնը եւ մեր մէջ :

Բայց կը մտնան կէտ մը, ինչու իրաւունք պարտականութիւն մը կ'ենթադրէ, նորանոր իրաւանց վրայ խօսուած միջոցին պէտք չէ մտնելու ասանց համապատասխանող պարտքերը . եւ հայ կնոջ վրայ զանոնք տեսնելու համար, հայ կինը ի վիճակի ըլլալու է այդ տեսակ պատասխանատուութիւն մը, այդ տեսակ պարտականութիւն մը ըստանձնելու :

Հայ կնոջ զերը եղած է մինչեւ հիմայ գրեթէ մեծ մասամբ տունէն ներս, առանին զբաղումները եւ արդու-

զարգը եղած են իր խնամոց միտակ առարկան, երբեմն լուացքը ու կարկուտաբար, երբեմն ալ զլիսարկին փետուրը ու ժանեակը լայն տեղ մը դրուած են իր մէջ, կինը երբեմն իր խանութածքին երբեմն ալ իր ընկերական զիրքին բերմամբ նախապատուութիւն տուած է ստաջնոյն կամ վերջինին, Այս բոլորին մէջ բան մը կայ պակաս, մեր մէջ կինը ինչ քանի ալ նախապատուութիւն տալու ըլլայ, խոհանոցին թէ զաշնակին եւ կամ երկուքին ալ միանգամայն եւ ըլլալով հարեմք երբեմն լաւ տանտիրուհի մը եւ խնամոտ մայր մը, քիչ անգամ կը պատահի որ իր ամուսնոյն իրական ընկերը ըլլայ, հասկնայ անոր մտքի ու հոգեկան արամագրութիւնները :

Եթէ հայ կնոջ զլիսուոր տեղը տունը եղած է, առնէն գուրս ալ բացած է սակայն ճամբայ մը գործունէութեան որը որքան խօսամնալից նոյնքան ալ պատուաբեր է :

Յրանայի մէջ կիներէ սարքուած գրական Ակումներն մեծապէս ազգած են ընկերութեան վրայ . առնցիմ են Բամպուլիէ մարքեդուէոյն ապրելը, ինչպէս նաեւ Օր. Տր Սթրեւէրիի շարժ օրերու հաւաքումները - les samedis այս եւ նմանօրինակ գրական Ակումներու յղացումը եւ արդիւնքն է Յրանսայի կանտոն Բիշիլէոյի օրով :

Մեր մէջ ասոնց նմանող բաներ մը ունեցած չենք : Ժամանակին Ամբիաներէն ուսանց ապարանքներուն մէջ եղած իբր թէ գրական հաւաքումներուն մէջ չեմ կարծիր որ կինը իր զերը ունեցած ըլլայ, եւ հետեւական ալ չէ ի նկատի ունենալով մասնաւոր կնոջ այն ժամանակուան յետադիմ վիճակը :

Առանց զէպի եւ հետեւները երթալու կարելի է ըսել թէ գրական ասպարէզին մէջ իր տեղը առաջին գրաւորը եղած է Տիկին Սրբուհի Տրևար, հեղինակաւոր մուտք մը ունեցած է իր « Մայտայ » ուլը, որը ժամանակին մեծ աղմուկ հանած է հրապարակի վրայ : Տիկին Ս. Տրևար, տոհմիկ գերազատանի մը շատուելով, « Մայտայ » է վերջ իր միւս երկու գործերովը բացաւ ճամբայ մը որ մինչեւ այն ատեն խոչընդոտներով լի էր : Իր ազգական մանր զգեստնց զինքը եւ ունեցած վաղահաս մահ մը : Իրեն հետեւողներ ունեցաւ մէկէ աւելին որոնց մէջ ամենէն աչքստուէն է Սիպիլը, ուրիշներ, ինչպէս Անայիտ, Ետերպէ, աւելի վերջին ժամանակներս Ջապէլ Եսայեան եւ Հայկանուշ Մարք, առանց մոռնալու հանդուցեալ Յիմին, կը մշակեն գրական զանազան ճիւղեր որք կոչուած են զիրար ամբողջացնելու :

Ինչպէս ուրիշ երկիրներու մէջ նոյնպէս եւ մեր մէջ ուսուցչական ասպարէզը իրենց համար յարմարագոյնը երեցած է : Վարժուիներու մեծակալ թիւ մը ունինք իրենց զանազան գտնաւորութիւններովը միասին, աւագ ուսուցչուհիներն զով օգնականն են եւ այն օրէն ի վեր երբ այն իսկպէս ձեռնբէց կորովի ուսուսնայ կինը որպէս էր Տիկին Գ. Մատակեան առաջին անգամ ըլլալով թրքահայոց մէջ մացուց մանկապարտէզի գրութիւնը, այդ օրէն ի վեր հետզհետէ ունեցանք եւ կուենանք բաւականաչափ թիւ մը Մանկապարտէզակներու, իմ մանկութեան օրերու յիշատակներու մէջ դեռ թարմ է երբ լուսահողի կինը բացաւ իր առաջին մանկապարտէզը ի Գոտը - դիւր, բնակարանէս երկու քայլ անդին : Եւ մէկէն կազմուեցաւ զիւրիկ ծանօթ տիկիններէն խնամակալութիւն մը՝ գործին փոփոքուած զարկը տալու համար : Վերջէն անկից անցաւ Բերա - Տիկին Մատակեանի ամենէն յաջող յաջողը սակայն կարելի է անուանել ողբացեալ Յակոբ Էտիլեանը, որը Իսկիւտաբէն Գատը գիւղ փոխադրեց իր մանկապարտէզը : Թատարակալ Բեւը նոյնպէս ունե-

ցած է իր կին ներկայացուցիչները, որք մեծաւ մասամբ թրքահայ, գացած հոտատուած են կաւկաս հոն գտնելով թէ՛ գործունէութեան լայն ասպարէզ եւ թէ՛ աւելի գնահատում :

Եւ ասոնցմէ զատ կան ուրիշ ասպարէզներ ուր կը փայլեցնեն իրենց ներկայութիւնը : Մեր մէջ ընդհանրապէս մանկապարտէզ կին մ'է . « մամի » ն առանին անուն մը եղած է որուն խորհուրդին երբեմն զիմելու պէտք կը զգայ հին թաղերու նոր փնտացուն . ինչ ընէ խեղճը, մի պուցէ սխալ քայլ մը առնելով փորձանքի մը հանդիպի :

Եթէ հինէն ունեցած ենք մանկաբարձներ, համեմատապէս մօտ ժամանակներս մուտ գտած է մեր մէջ պատրաստուած հիւանդապահուիչներ, ոչ նուազ կարեւոր եւ արդիւնաբեր ալ ասպարէզ մը, եւ nurse - կրուն ու sœur - կրուն զով ինչու չունենան իրար զէն մեր իսկական հիւանդապահուիչները :

Եւ եթէ յիշողութիւնս զիս չի մատներ աւելի կանուխէն ունեցած ենք բժշկուի մ'ալ, Օր. Ոսկման, անգլիական համալսարանէ շրջանաւարտ, առանց յիշելու ներկային մէջ ուսանայ բժշկուհիները :

Ունեցած ենք եւ միշտ ունինք գործաւորներ, ըլլա՛յ երկրին ներսերը ըլլա՛յ մեծ կեդրոններու մէջ, Կ. Պօլսոյ զլիսուորաբար Սամաթիոյ, Գում Գափուի եւ Եէնի Գափուի թաղերուն մէջ « տիւլա » եւ « իշլէմէ » բանելով իրենց ապրուստին ճարող կիներ ու աղջիկներ շատ կանուխէն գոյութիւն ունեցած են :

Աւելի վերջերս Աքեմուտքի հազուադէպ կապուստին նորածնութեանը հետ երեւան կաւ հայ դերձակուիին ու յետոյ կին գլխարկավաճառը . եւ կարծեմ ներկային մէջ ունինք ի Պօլսո հայ ծաղիկավաճառուի ալ, հարսանեաց ու ննջեցեալի ծաղիկներու պատրաստիչը . գործ մը որուն համար ամէն տարի մեծակալ գումարներ մեր գրպանէն կերթան պարարտացնել օտարին գրպանը :

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՍԼՔԵԱՆ (Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ  
« Ընկերային հարցեր » ու առաջին յօդուածին մէջ, երկրորդ երես, երկրորդ սերնակ 15 րդ. սող - « այսպէսով ուրուագծուած կըլլայ » պէտք է կարգալ, « այսպէսով ուրացուած կըլլայ » : 66 րդ սող . « կը նշանակէ թերացած ըլլայ » պէտք է կարգալ « կը նշանակէ թերացած ըլլալ » :

ՄՂՁԱԽԱԶ

Նուիր Ե. . . .

Լանջերու սակ ծանր ցաւեր դողողուն Հին օրերու երազներով կ'օրոնդին Ու յոյս կայծեր խառնափնտրու պես մարմնակն Նայումսկերու հուր կառնեն հուր յեհն . . .

Կուրծքս կոսսայ սարսուղներով ջրիւրացին Հուրիներու հրախալ բեռին սակ լրբուն Ու յոյսի կեղծե հեւային իմ կեանքին

Ու դաշիդիւն այնքա եւ որ կը բոշնին Կեանքի ջրխուր շողերուն սակ բոցախառ Տրժոյն սերեւ մ'եւ Աշխարհի մեջ սկիւնակն Ա'ն Առաջիկ կուզեմ Անրա, լրոյն յար : Գարնակ շուշակ մ'ըլլայի եւ խաղաղաս Շրնջի լուռ յոյս Անդին հաւերտով Անոն բոյր կարճ օրերու մեջ սուս Մաղիկ սերս արձեւ մուկ, անխորով : Ս. Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ազգային « Բաֆֆի » Թատերախումբը Շարաթ երկու 28 Օգոստոս իր ծանուցած ներկայացումը առաւ ի նըպաստ « Պօլսոյ Միացեալ Ընկերութեան » :

Գերակատարներէն ոմանք իրենց զերբը լաւ գոյ ըրած չէին, մէկ քան իրերը լաւ ապագայ կը խօստանան : « Աշխատութիւնը եւ յարասնութիւնը կը զնէ մըցանակը » ըսուած է :

« Բաֆֆի » թատերախումբի անդամներն ալ պէտք չէ յուսահատին : Արգարեւ իրենց զէմ մեր մէջ սովորական եւ ներքի( ) գործած խաչակրութիւնը սկսած է . բայց քաջութիւնը ատոնք զլիւղ անցնելուն մէջ պէտք է փնտռել :

Ըստ ամենայնի պարկեշտ գործունէութիւն միայն բաւական է իրենց՝ իբրեւ յաղթահարող զէնք :

Թատերասերները քիչ էին, բայց այդպէս ըլլալով հանդերձ, թատերական ծախքերը հանուելէ յետոյ 5-6 տակոյ գումար մ'ալ նպատակին կը մնայ, ինչպէս կը խօսուի :

ԲԱՋԱԼԵՐՈՂ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Ս Լ Ի Բ

Տէր Լ Տիկին Թորոս Նիկողոսժեան, Այրի Տիկին Եւտրոպի Յ. Սարգիսեան, Տիար Յակոբ Նիկողոսեան, Տիար Արտաշէս Նիկողոսեան Լ Պ. Պերճ Յ. Սարգիսեան իրենց շնորհակալքը կը փութան յայտնել այն ամեն ազգականաց Լ բարեկամներու, որոնք բարեհաճեցան անցեալ Հինգշաբթի 27 Օգոստոս (ն . տ . ) ներկայ գտնուելով

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱԳՆԵՍ Շ ՓԱՓԱՋԵԱՆԻ  
իրենց մօր զօքանչին, մեծ մօր Լ ազգականին թողման արարողութեանց՝ Լ իրենց ցաւակցութիւնները յայտնեցին այս տխուր առթիւ :

Հեռագիրները կարգաւ չորրորդ երեսին մէջ :

Ա.Ջ.Գ.Ա.ՅԻՆ Լ ՈՐՐԵՐ

ԱՂԵՔՍԱՆԳԻՒՈՅ ԳՈՐԾԵՐԷՆ

Սա Աղէքսանդրիացիներն ալ իրացնէ անբողք են : Պահ մը մեզի ա՛յնպէս հաւատացուցին թէ Ընդհանուր Ժողովի ընտրութիւնը կատարուած է վաւերացուած իսկ է : Մինչեւ իսկ Գաղաքի Ժողով ալ ընտրեցին : Բայց ինչպէս Պօլսոյ թերթերը կը զրեն, վերջին խառն ժողովը բեկանած է եղեր կատարուած ընտրութիւնները, նկատելով որ շատ քիչ թուով ազգայիններ միայն մասնակցած են կատարուած ընտրութեանց, Լ այս նկատելի պարագան տեղի տուած է դժգոհութեանց Լ բողոքարկութեանց :

Խառն Ժողովը որոշած է որ վերստին կատարուին ընտրութիւնները, ըսել է որ չիղեալ պիտի նըկատուի թեմական երեսփոխան Ժողովը, որ տակաւին քանի մը շաբաթ առաջ այնչափ օրինակելի հապճեպով մը Գահիրէ գալով կատարուած ընտրութեանց գոր-

ճերտով ալ զբաղեցաւ : Արդ՝ քա- նի որ իրենց ընտրութիւնը վաւե- րական չեղաւ և բեկանելի դատուե- ցաւ, ուրեմն նոյն բաղդին պիտի արժանանայ կաթողիկոսութեան հա- մար իրենց քուէարկած սրտումնե- րն ալ :

Ալ հիմայ դժուարութիւն չմար կռահելու համար թէ՛ ինչո՞ւ Աղէք- սանդրիոյ մէջ ազգայիններէ ոմանք վարկաբեկել կը ճգնին Պատրիար- քական Տեղապահ Կեր. Տ. Եղիշէ Եպիսկոպոս Գուրբանը, որ այնչափ ովսնաններով Պօլսոյ մէջ Պատրի- արքական աթոռին վրայ բազմեցու- ցին :

Թէպէտեւ այս որոշումները հաս- տատապէս մեզի կը բերեն Պօլսոյ թերթերը, սակայն տակաւին Աղէք- սանդրիոյ թեմականները Արևի մէջ ջանքեր մը կընեն հաշիւ և գոյքեր պահանջելու :

Եթէ ն. Վահուժիւն Բարթող Բաշա գոյքերը յանձնելու փութկու- տութիւնը ունենար, չենք դիտեր թէ ի՞նչ արդարացոյցիչ միջոցներ պիտի գտնէր հիմայ Պօլսոյ Վարչու- թեան առջև ինքզինքը արդարաց- նելու, երբ այս վերջինները իրմէ պահանջէին ազգային հարստութիւն- ները, որոնք պաշտօնական մասնաւոր գրութիւններով իրեն յանձնուած էին :

ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Արևին մարդիկը հիմայ ալ ըս- կած են զանազան կուսակցական հաշիւներով հակառակութեան հո- սանք մը գոյացնելու ջանալ, իս- ուրն Բատարանց փաստաբան Տիար Միհրան Թեւեանի ղէմ, որ Աղէք- սանդրիոյ Վարչութեան փաստաբան խորհրդակցան էր միանգամայն :

Տիար Միհրան Թեւեանը զըր- պարտել կուզեն թէ՛ տարապիւնները վերադարձնելու համար եղած հան- դանակութիւններէն մաս մը դրամ պահած է եղեր քովը կամ զեղծած է ըսել կուզեն :

Այս ճիւղը զբարտաւթեան ալ- բերները չենք գիտեր և գիտնալու ալ պէտք չկայ. և նոյնիսկ Թեւեան էֆէնտի ալ մեզի ոչինչ գրած է այս մասին. սակայն հազարաւոր պարագաներու մէջ փորձերով հաս- տատած և համոզուած ենք թէ՛ Պ. Թեւեան մին է այն հազարազիւտ ղէմքերէն, որոնց հանրային պաշ- տօնավարութիւնը և հաւատարմու- թիւնը ամէն կատկածէ և տարակոյ- սէ վեր կը մնայ :

Մենք աւելի կը կասկածինք այդ դարձուածներուն մէջ Յակոբ Օհանեան բուռած պարտէն. որոյ մասին «Արև» էն զատ ուրիշներէ ընտ նպատակաւ բառ մը իսկ լը- սած չենք. հակառակ մեր խու- զարկու հետաքրքրութիւններուն և ընդհակառակը շատ մը եպիսկոպի և ազատ գործերուն միայն ծանօթ եղած ենք :

Շատ հաւանական է որ- ըստ Պ. Ե. Օսեանի- այդ տխուր պարտին մէկ նոր շահատակութեանը զո՞հ կերթայ Թեւեան էֆէնտի, և մեծ յոյս ունինք թէ՛ շուտով ճշմարտու- թիւնը կը յայտնուի և բուն յանցա- ւորը հանրութեան գատատանին կը յանձնուի :

Անցեալ օր բարեկամ մը վերև յիշուած Յակոբ Օհանեան տիրանուն

պարտին համար կըսէր թէ՛ ինք- ջինքը իբրև Դաշնակցականներու տեղոյս ներկայացուցիչը յայտարար- րած է տարագրեալներու Կօմիթէ- ին և այլոց :

Եթէ ստոյգ ենթադրենք այս պարագան, Դաշնակցութիւնը տա- րակոյս թող չունենայ թէ՛ քիչ ա- տենէն Դաշնակցութեան վարկն ալ իրեն չունեցած վարկին կը հաւա- սարեցնէ այդ պարտը :

ԱՆԿԱՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Ամերիկայի մէջ «Արծիւ» ի իրմ- բազիր Տ. Մ. Արշակի նախաձեռնու- թեամբ «Անկախ Միութիւն» տիտղո- սին ներքև միութիւն մը կազմուած է, որուն ծանուցումէն հետեւեալ հաս- տածը կ'արտադրենք :

«Անկախ Միութիւն» ը նկատե- լով նաև թէ կարգ մը վատասերած և ոճրամիտցած խմբակցութիւններ փոխանակ քաղաքակրթեալ եղա- նակներով իրենց նպատակին հաս- նել աշխատելու՝ բարբարոսական միջոցներ կ'որդեգրեն, և սպանու- թիւններ կը սարքեն՝ հրապարակու- կը յայտարարէ որ՝ ասից վերջը եթէ ո՛ր և է հայ սպանուի, - հոգ չէ թէ ով ըլլայ այդ զոհը, ան- պարտաճանաչ հորստ մը, կամ անպարտաճանաչ Պատրիարք մը, ոճրագանները պատասխանատու պի- տի ճանչցուին անկախ միութեան, որուն խորհրդին արդարութեանէն ճողպարում չկայ, և որ ամեն Ար- Դիւնիստի միջոց պիտի գործածէ զանոնք արժանաւորապէս պատժել - պատուհանելու համար :

Անկախ Միութեան անգամակ- ցիլ կամ օգտակար թելադրութիւն- ներ ընել ուղղները թող հաճին Եգիպտոսի համար զիմել տեղոյս ներկայացուցչին, և Անոր ծանօ- թեանալու համար «Արշալոյս» ի իրմ- բազիրութեան :

ԱՂԻՍՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աղիքսանդրիոյ Հայ- Կաթողիկ Եպիսկոպոսարանէն զրկուած է մեղի կանոնադիրը նոր հիմնուած Աղիք- տարինամ Ընկերութեան, որուն Վարչական Ժողովը կը բաղկանայ հետեւեալներէն .

Արհիտագաթի Գերագոյն Գո- յունեան Առաջնորդ (Նախագահ) .

Պ. Պ. Հապիպ Շաթէ (Ատենապետ) Արթիւն Նահապետեան (Փոխ- Ատենա- պետ) Աղիկ Ժոհարճի (Քարտուղար) Զարէն Մալխաս (Օգնական-Քարտու- ղար) Յովակի Մամլէտան (Գանձապահ) Աղեքսանտր Տիգրան (Անգամ) Միշէլ Մաթրակի (Անգամ) Տր. Մարմարեան (Անգամ) Նէկիպ. Ժանճի (Անգամ) Տիգրան Շաչեան (Անգամ) :

ՄԻՈՒՋԱՆԻՒՄ

Կերակի օր Ս. Աստուածածնայ տօնին առթիւ և Ս. Աստուածածնին եկեղեցոյն մէջ «Սպահանդէս» տե- ղի ունեցաւ, տեղոյս Դաշնակցա- կաններուն նախաձեռնութեամբ ի հանդիստ հոգւոյ թուրք և հայ հին և նոր ննջեցեաց :

Ատենախօսութիւններ եղան, խուռն ընտրեալ, երկուսն և ամէն ազգէ խառն հանդիսատեսներու :

Հանդէսը փակուեցաւ, միջազ- գային պայլիկներու փոխանակու- մով . . . Մանրամասնութիւնք ու- րիշ առթիւ :

Շահեկանութենէ զուրկ չ'պիտի ըլլայ անմիջապէս ըսել թէ՛ պա- չիկները ատենակալներու մէջ սահ-

մանափակուած է, և լախտաւոր- եալներ չ'կան եղեր անոնց մէջ . . . ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐԸ . . .

Այս անունին տակ մեկնողները Պօլսոյ մէջ ալ լաւ ընդունելութիւն պիտի գտնեն, հո՞ն ալ մասնախում- բեր կազմուած են որ «քաղաքա- կան յանցաւորները» ատեն մը պի- տի սնուցանեն, մինչև որ Պօլսոյն ձանձրանան ու վերադառնալու վը- րայ մտածելու պէտքը ունենան :

Երջանիկ թուական, որ 807- մամի Զաքէոս Ազան անգամ «քա- ղաքական դատապարտեալ» մը կը դառնայ . . .

ԱՌԱԻ ՓԱՍԱԻ

—Օսմ. Սահմանադրութեան վե- րահաստատումը թէև ընդհանուր կերպով օգտակար է և հետզհետեւ աւելի օգտակար ալ պիտի ըլլայ անտարակոյս, սակայն մասնակի վը- նասներ ալ ունենալէ չ'գաղտիր : Զոր օրինակ. անցեալ օր ճաշարա- նատէր մը կը զանդասէր թէ՛ Օսմ. Սահմանադրութեան երեսէն միա- նուագ քսանի չափ ոսկի կորսնցու- ցած է, իր ապառիկ ուտող յաճա- խորդները ձրի շոգենաւով մեկնելէ առաջ իրենց պարտքը վճարելը մոռնալով . . .

—Իրաճեալ՝ ուրիշ մը կը գան- դատէր թէ՛ Օսմ. Սահմանադրու- թիւնը պատճառ եղած է որ իր պաշտօնեան առանց հրամանի դը- բամարկէն գումար մը առնելով մեկնի (ընականաբար գողոյթիւն չենք կրնար ըսել այս դէպքին, քանի որ պատճառը Օսմ. Սահմա- նադրութիւնն է) :

—Արաբիկցի մ'ալ, Հրանտ Տէր Գարբիէլեան անուն մէկը՝ որ աներ- ձագն է Պ. Խաչատուր Շահրազեանի և անոր տունին մէջ և հովանոյն ներքև ապրած է ժամանակ մը, խեղաթիւթիւնը կունենայ տասնա- կան ոսկի ձեռակերպեղ երկու ուրիշ Արաբիկցիներէ և մեկնիլ աստի Օսմ. Սահմանադրութեան Պօլսոյ հանդէսներուն մասնակցելու համար :

Կրտսի թէ՛ Պ. Շահրազեանք թէև երաշխաւորած են բերանացի, սակայն ի վերջոյ այնպէս մը հաս- կըցուցած են թէ՛ յանցաւորը Օսմ. Սահմանադրութիւնն է և այդ պարտ- քը տարագրելոց Կօմիթէի անտու- կին կողմէ պէտք է որ վճարուի :

Յաւալի պատգրայ : Շահրազ- եան ըսուածներու պաշտպանեալը և ճարպիկ աշակերտը - որովհետև դա- սը անոնք տուա՝ են - այնպիսի մէկուն գրամը շարժած է՝ որ բազ- մանգամ ընտանիք մը պիտի ապրե- ցնէ 3-4 փոքրիկներով . իսկ իրենք հիմայ ուրանալ կուզեն իրենց ե- րաշխաւորութիւնը, ինչ որ վերին աստիճանի անամօթութիւն ըսել է իրենց համար : Ուրիշ բան է թէ օր առաջ գոհացնել փութեան պա- հանջատէրը :

Ինչ սքանչելի Սահմանադրու- թիւն, որ անբարոյակնութիւն ալ կրնայ դատախօսել ի հարկին :

ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

Միութեան Գործակալութեան Դ. Մատենաբաշխութիւնը տեղի պի- տի ունենայ այս կիրակի 6 Սեպ- տեմբեր, առաւօտեան ժամը 11 ին, Լարան - Ընթերցատան մէջ : Հրամայեցէ՛ք՝ տոմսակ ի ձեռքին :


ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Արաբիկերի կարօտելոց համար կազմուած հանգանակիչ մասնախում- բին կողմէ զրկուած է հետեւեալ ցուցա- կը : Ազգային Առաջնորդարանէն թէև հաղորդուած է մեզ Ակնայ և Արաբի- րի հանգանակիչ Մասնախումբերուն ա- նունները, սակայն քիչ մը ուշ հասած ըլլալուն համար յայտնի թիւին յետա- ձգուեցաւ անոր հրատարակութիւնը :

ՅՈՒՑԱԿ Ա.

S. S. Բլաբքեան Եղարք 500, Հաճէթեան Եղարք 295, Եղապեան Եղարք 292, 20. Թովմաս Բրուսեան 195. Խաչիկ Պաղասարեան 195, Ն. Մ. Աղա- ղարմ 150 զըշ. 10 փր. Բրուսեան Եղարք 150. Պէրպէրեան Եղարք 150. Գէորգ Եկաւեան 150. Շահրազեան Եղարք 100. Գէորգ Տէօփլէթեան 100. Յովհաննէս Զաղապանեան 100. Յովհաննէս Տէր- վիշեան 100. Տիկիւնսկի Ս. Հաճէթ- եան 97, 20. Ժէպէճեան Եղարք 60. Ժիզմեճեան Եղարք 50. Կարապետ Գագմեան 50. Ս. Օտապաշեան 50. Դանիէլ Ս. Միլիքեան 50. Գրիգոր Գագմեան 50. Սարգիս Իփրանուսեան 50. Գումար 2832 զըշ. 20 փարայ :

ՎԱՐԴ ԵՒ ՉԱՐԴ



FABRIQUE de Fleurs artificielles POUR BOUTIQUES DE MODES, PÂTISSERIES, COIFFURES ET FLEURS DE CHAPEAUX. M. S. Schotchkoff



ՅՈՒՄԵՆ ԼՈՒՍԻԷ Պ. ՉՈՒՄԿՈՅ ՄԻՈՒՄԵՆ ԵՄՍ ՄԻՋԵԿԻՆ ԼՍՏԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՈՅԸ ԺԵՏ ԴԻՄՍՏԸ ԱՐՈՒՆՍԱԿԱՆ ԾԱՂԿՆԵՐՈՒ ԱՓԵԼՆԵՑ Զորսանեկան զե- ղակազմ պուզնեղու. շեղ ծաղիկեղջիւնը, պսակներու և բեղոյրի (չափիս) հրաշագեղ ծաղիկներ ունենա- լու համար մի գիմէք այլուր : Մեր գիները գիւրամտաչելի են և ապրանքները անմրցելի : Փորձի համար անգամ մը այցելու- ղը, ապահովապէս մեր մնալուն յաճա- խորը պիտի ըլլայ : Մեր տարիներու փորձառութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի : 31-43 Տիկ. Լ. Պ. ՉՈՒՄԿՈՅ

ՍԵՂԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց թիւ 6, Սիկելրի մասնա- ճիւղին քով, Ժիւսքերի դիմաց :

Կը գնէ և կը ծախէ հրապարակի վրայ չըջաբերող բոլոր կարեւոր արժե- թղթերը, մասնաւորաբար Գրէտի Յօս- սիէի հին և նոր, Բուժէլիի երկաթուղ- եաց և Բանամայի ֆրանսական վաւե- րացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիտ նպաս- տաւոր գներէն կրնան օգտուել Եգիպ- տարեան մեր ազգայինները մեզի գի- մնով :

Մասնավճարներով - 25, 50, 100- կարելի է արժեթղթերու տիրանալ, և մասնիկ պայմաններով՝ աւանդի փո- խարէն՝ փոխառութիւններ կ'ընել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, և առեւտրական ամեն կարգի Պոստիւր զեղջիւլու պատ- րաստակամութիւն :

Սեղանաւորական և Պօրսայի գոր- ջառնութիւններ և այլ կարգի գոր- ջերու վերաբերեալ գաւառներէն եղած Իանձնարարութիւններ փութով կը կա- տարուին :

Բուժէլիի երկաթուղոյ վիճակա- հանութեանց պանդ Օթօմանէն երաշ- խաւորեալ և վաւերացեալ քրօն Կանիէ գնել ուղղութեան համար՝ լաւ պատե- հողութիւն մ'է մեզի գիմնել, որովհետև պանդ Օթօմանէն ուղղակի կ'ստանանք յիշեալ քրօնակները : 12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՒԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԲԻՅԷ



# ՍԵՓԱՎԱՆԱՏԵՐԲ

## Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՔԱՐԻՔ

ՅՈՏԿԱՆՈՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վախելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել սրոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անխոսելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրութեան մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՔԱՐԻՔ

## ՀԵՌԱԳԻՐ

— Լոնտոն 26 Օգոստոս . — Կարեւոր տեսակցութեան մը տան թուրք գաղտնի ոտսիկանութեան պետ Ջիւա բաշա յայտարարեց թէ Երիտասարդ թուրքերու ընթացքին կը հաւնէր, և բնաւ չի յուսար թէ՛ այս վերջինները իրեն պիտի ներեն, պաշտօնի վրայ եղած միջոցին իր մեծերուն հրամանովը անհետացուցած 170 պաշտօնատարներուն համար : Աւելցուց նաեւ թէ՛ օտար հրապարակի վրայ տեղաւորուած մէկուկէս միլիոն ոսկին յաջողած է ձեռք անցնել :

— Բարիկ 26 Օգոստոս . — Իշխան Սաւաղէտին իր հօր տամատ Մահմուտ բաշայի, աճիւնները միասին առնելով թուրքիա մեկնեցաւ :

— Կ. Պոլիս 26 Օգոստոս . — Հացաւորները գործադուլ ըրին : Հացի չ'գոյութիւնը աւարտութեանց պատճառ եղաւ :

— Կ. Պոլիս 27 Օգոստոս . — Թուրք Յանձնաժողովը կ'ըսէ թէ՛ Նօլի պաղարի երկաթուղոյ գիծը երկրորդական կարեւորութիւն ունի և կը յանձնարարէ անկէ առաջ ուրիշ աւելի կարեւոր գիծեր աւարտել :

— Կ. Պոլիս 28 Օգոստոս . — Իշխան Սօհաւմէտ Բաշատ, թուրքիոյ Գահաժառանգը՝ Կրեք տարիէ ի վեր առաջին անգամը ըլլալով իր եղբոր, Սուլթանին, այցելութիւն տուաւ :

— Կ. Պոլիս 29 Օգոստոս . — Ալի պէյ Մէվլէվիի ստորագրութեամբ « Իգտամ » յօդուած մը հրատարակած է, որուն մէջ կը ջատագովէ Լորտ Բրոուըրի Եգիպտոսին մատուցած ծառայութիւնները : Նա կըսէ թէ՛ կը յուսայ որ թուրքերուն մէջ կարելի պիտի ըլլայ Լորտ Բրոուըրի կարողութիւններովը օժտուած մէկը գտնել, որ թուրքիոյ վերածնութեան գործը ի գլուխ հանէ :

Եգիպտոսի մէջ Սահմանադրութիւնը գործադրելու համար ազգայնականներու պահանջը ի նկատի ունենալով, « Իգտամ » կըսէ թէ՛ Եգիպտոս տաանձնաշնորհեալ նահանգ մը ըլլալով և միեւնոյն ժամանակ ներքին անկախութիւն վայելելով՝ Օսմանեան Խորհրդարանին չի բնար մասնակցիլ, և կը յաւելու թէ՛ Եգիպտոսի արտաքին յարաբերութիւնները կը վարուին Ֆէրմաններու արամադրութեանց համաձայն :

— Կ. Պոլիս 29 Օգոստոս . — Մամուլը համոզուած է թէ՛ Պոլսոյ նոր հրդեհը կամ յետագիմականներու և կամ վերջերս ազատ ձգուած ոճրագործներու արարքն է :

— Կ. Պոլիս 30 Օգոստոս . — Անատոլի երկաթուղոյ պաշտօնականները, որոնք իրենց թոշակներուն յաւելում պահանջած և ստացած էին, հիմակ ընդհանուր Տնօրէն Պ. Հիւկէնիին պաշտօնականութիւնը կը պահանջեն, առարկելով որ այս վերջինը հին բէմի շատ մը պաշտօնատարներու հետ յարաբերութեան մէջ է :

Տեսակցութիւնը շատ սիրալիկ էր : Իշխանները յետ այսու պիտի կրնան

ազատօրէն շրջիլ և պատուաւոր բանտարկեալներ չ'պիտի նկատուին : Սուլթանին հետ հաշտուած են :

Հին Բէմիին ազդեցութեամբ արգիլուած ռազմափորձերը վաղը պիտի վերսկսին :

## Ն. Ս. Մ. Ա. Կ. Գ. Ս. Հ. Ի. Բ. Է. Ե.

Պատուարժան  
Խմբագրութիւն «Արշալոյս»  
Կարնեցի Ազգային մը համար և զամ հանգանակութեան մասնակցած ըլլալու, և այդ նուիրատուացանուններն ձեր 505 թիւ թերթին մէջ ալ նշանակուած տեսնելու, զարմանօք կուզամ յայտնելու որ, անուն ցանկին մէջէն համարձեք և մոտացութեան է պացիր, Միսաք Սանտոգեան.  
Գահիրէ 28 Օգոս. 1908

Շ. Խ. — Այն ատեն սոյն հանգանակութեան մէջ « շաթրութիւն » մը եղած ըլլալու է :

Վ. Բ. Պ. Ա. Կ.  
Նախորդ թուով հրատարակուած Կարնեցի Փրիխանեանի Հանգանակութեան ցուցակին մէջ Ս. Արիխանի տեղ՝ Վ. Չաքարեանի տեղ՝ Վ. Զաքարեան պէտք է կարգալ :

## Վ. Բ. Պ. Ա. Կ.

Նախորդ թուոյն յաւելուածին մէջ հրատարակուած « Իգմիրեան Սրբազանի Աստուածացումը » գրութեան վերէն հաշուելով Տրդ տողէն սկսեալ հետեւեալ կերպով կարգաւորուէ :

« Բաղբաթի կոտորածի Սիւրիքի մէջ, պահպանողական կուսակցութեան պատկանելուն չէր արտօնէր որ տարիներէ ի վեր բռնակալութեան եւն »

## ՕԹԷԼ ՏՐԱՊԻՋՈՆ ԱՂԷՔԱՍԻՆՆԻՍ

Քանթօ, Սուգուլ Մանկաի 3 Թէֆֆիէթ-Էլ-Քալչանի փողոց 3 Մանկաի Մզկիթին դէմը 3 Թիւ 3

Պանդուկապետ - Մ. Գէորգեան

— օ —  
Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը դանուղ և օղաւէտ գիրքով սոյն պանդուղը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Դիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք :  
Գիները չափաւոր են : 28-55

## ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ


Պաղարի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաթէ Տը Լա Գուրսի կից  
Հին ԵՒ ՆՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկըրներն են և ստոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսյակն և մեքանիկ վարանքուած, երաշխաւորեալ մեքանիկներ.

## ԱՄԵՆԷՆ ՄԵՇ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաների մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻԲԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՅ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկըրի յաւակնչիմ

Գին ՉԱՓԱՒՈՐ

## ՍՍՐԳԻՍ Յ. ԹՄԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքանիկներու, փօկիրափներու և կազի վառարաններու :

Տասներկու տարիներ « Սինկըր » ընկերութեան թով մեքենայարդարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնստանթինուի թով պաշտօնեայ է զէնքերու և մեքենայարդարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարսպոյ ժամերը պիտի արամադրէ կարի մեքենաներու, փօնօկրափներու, կազի վառարաններու, նորոգութեանց և յարգարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան գիմել իր սուներ Պաղը - Շէհրիէի կողմը Շարա Պէզղալա՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարանի Հայկականի Տնօրէններուն, և զարձեւել զիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան գիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տուրիս թիւը :

Իր նորոգութեանց վարձը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ :  
Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ :  
19 - 50

## ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊԷԼ-ԽԱԼԻՔ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոն վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնայուն դիրք մը բռնած է տարիներէ ի վեր :  
Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախորդները գոհ թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան և գնումին տանն շատ խնամք և նոյն իսկ բժախնդրութիւն կը ներնք : Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է և մաքուր մեր թով :

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր զանգատանաց պատճառ տուած է, մեր թով գոհունակութիւն միայն տուած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են :

Չեր սուներն նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիմեցէք Պապ-Էլ-Խալէ՛ մեր վաճառատեղին և չ'պիտի զղշաք :

16-41  
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՃԵԱՆ